

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ

Ս՚Կ բան մը որչափ ալ պարզ ու բնական ըլլայ, երբոր մարդս անոր պատճառը չգիտեր՝ կը զարմանայ վրան ու կ'ապշի. օրինակ ըլլան աճպարարներուն՝ ըրած տեսակ տեսակ խաղերը, որ պատճառը չգիտցողին առջև կ'ախարհութեան պէս բաներ կ'երևնան, բայց բնական գիտութեանց քիչ մը տեղեկութիւն ունեցողին համար ամենեւին զարմանալու բաներ չեն. զարմանայ ալ նէ՝ աւելի ան խաղերն ընողին ճարակութեանը վրայ կը զարմանայ՝ քան թէ եղած խաղերուն վրայ : Ս՚ենք հոս քանի մը բնագիտական խաղեր դնենք օրինակի ու օգտակար զուարճութեան համար :

Ա. Ս՚ԵՐԻ ԴՆԷԲԱՆ ԴԵ ԶԳԵԼՈՒ ԲՈՒՆԻՅԵՆԵԼ :

ՄԱՆԻ մը մէջ ջուր լեցուր, ու մէջը քանի մը կտոր փռատիւն ըսուած նիւթէն ձգէ, որ փութասին զուտն է, մէկէն կը բռնկի :

Ս՚ ասն զի փութասինը ասյատկութիւնն ունի որ զջուրը կը լուծէ. աս ջրին լուծուելուն ատենը այնչափ տաքութիւն կը պատճառի որ ջրէն ելած ջրածին կազը կը բռնկի : Ս՚ փռատիւն ըսուած նիւթն ալ, որ սոտային զուտն է, նոյն ոյժը ունի. բայց փորձը ասով ընելու ըլլաս նէ՝ պէտք է ջրին տաքութեան աստիճանը 40 աստիճանէն վեր ըլլայ :

Բ. Ս՚ԼԵՐ ԲՈՅԻՆ ՎԵՐԱ ԲՈՒՆԵԼՈՒ ԼԱՅԻՆԵԼ :

Ս՚ԱՇԿԻՆԱԿԻ մը մէջ թէ որ ողորկ ու փայլուն գնտակ մը պլլես, ինչպէս պիլիարտի գնտակ մը, բոլորը մէկէն կրնաս բոցին վրայ բռնել, ու թաշ-

կինակդ չայրիր, թէպէտ և մէջի գնտակը սաստիկ կը տաքնայ : Ս՚ երեւու թիս պատճառը ան է որ ջերմութիւնը լաթին վրայ չկենար, հապա շուտ մը կ'անցնի ծակերէն ու գնտակին վրայ կը ժողվի : Ս՚իայն պէտք է որ թաշկինակը գնտակին վրայ ձիգ ըլլայ ու ամենեւին ծալք չունենայ : Ս՚րնաս թաշկինակին տեղը դերձան գործածել, գնտակին տեղն ալ ապակէ շիշ մը :

Գ. Ս՚ԿԱՄԱՌԱՅԻ ԴԵ ԴՆՊ ՍԵՂԸ ՊԵՐՊՅԵՆԵԼ՝
ՍԿԱՆՅ ԱՆՈՐ ԴՊՆԵԼՈՒ :

Ս՚ԿԱԽԱՌԱԿԻ մը մէջ ասեղ մը ձգէ ու այնպիսի գրասեղանի մը վրայ դիր որ շատ հաստ ըլլայ. ետքը մագնիսած երկաթ մը առ ու սեղանին տակը պտըտցուր. կը տեսնես որ ասեղը կը սկսի շարժիլ և ուղած կողմը ելթալ. զինքը շարժողը մագնիսական ձգողութիւնն է :

Դ. Ս՚ԻՐԻՐ ՎԵՐԴԸ ՃԵՐԴԵՅՆԵԼ, ՃԵՐԴԵՆԹԸ
ԿՐԴԵՐՅԵՆԵԼ :

Ս՚ԲՈՐ աղէկ մը բացուած վարդը ուզես ճերմկեցնել, քիչ մը ծծումք այրէ ու վարդը անոր գոլորշիքին բռնէ. թթու ծծմբուտ կազին ուժովը կը ճերմկնայ վարդը : Ս՚ ուզես որ նորէն կարմրի, ջրի մէջ դիր. քանի մը ժամ որ անցնի՝ թթուն կը լուծուի, ու վարդը նորէն կը կարմրի :

ՀԱՆԵԼՈՒԿ

ԵՍ երկու գաշտ տեսայ տափակ, Լըծած վեց եղն յերկու կրնձակ. Թէ դու կարծիս ունիս խառնակ, Գեղիրաւունք առնէ յըստակ :